

Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ՋՈՒՂԱՅԵՅՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՍԿՁԲՆԱԳՔՈՒՐ

18-րդ դարի հայ ժամանակագիրներից է նորջուղայեցի Խաչատուր աբեղա Սաեակյանը, որը պատմագրության մեջ հայտնի է «Ջուղայեցի» մականունով: Ուսումնառությունը սաացել է տեղի Սր. Փրկչի (Հրաշակերտ) վանքում, իսկ այնուհետև եղել է Ամենափրկիչ վանքի միտքամտության գործիչներից մեկը: Մահացել է հավանաբար 1795թ., Բասրայում, ուր գնացել էր իբրև միաբանության նվիրակ¹:

Խաչատուր Ջուղայեցին առանձնակի կրթություն չի սաացել: Այս առումով նա գրում է. «Ձի ո՛չ էի ես տրուպ թշուառագոյն վատաբաղոս կրթեալ և երա-
հանգեալ ի յիմաստս համալսարանի քերթողաց, և ո՛չ ի ճեմարանս վսեմագոյն
իսկ եզօր տփեսացեղի արդեօք բնաւ մարգեալ»²:

Պատմագրության մեջ զգալի եետաքրքրություն է ներկայացնում նրա «Պատմութիւն Պարսից» երկը, որի էջերում հավաքվել ու համարակալվել են Իրանի պատմության վերաբերյալ հայկական պատմագրական հուշարձաններում ամբարված բոլոր աեղեկությունները: Այն իսկուպես ժամանակագրություն է, և միանգամայն ճիշտ է նշում «Պատմութիւն Պարսից»-ի երատարակիչ Բ. Ա-
դալեյանցը, որ իականպես Խաչատուրը ոչ թե պատմություն է գրել, այլ մի ժա-
մանակագրություն³: Այս ամենը հաստատում է նաև ինքը՝ Խաչատուր Ջուղայե-
ցին. «Սյլ ո՛չ ապաքէն զգործս՝ և զարութիւնս նոցա ուրոյն վիպելով, զորոց որք
նախ քան զմեզ էին՝ գեղեցիկ և սեթևեթեալ ոճով գրեցին. այլ և եթ միայն զանու-
անս նոցա յիշատակելով և եթ արդեօք մարթ ինչ իցէ՝ և զթիւս ամաց թագաւորե-
լայն նոցա, այսինքն՝ եթ յո՛րում ամի, և քանի ամ թագաւորեցին»⁴:

«Պատմութիւն Պարսից»-ը եեղինակը համարում է առաջին հատոր, որը սկսվում է Կյուրոսից՝ 559 Ջ. ա. և եասցվում է մինչև Զերին խանի մահը՝ 1779թ: Երկրորդ հատորի մասին պատմիչը առաջին հատորի նախադրության մեջ գրում է. «Իսկ զհատորն երկրորդ ունի յինքեան պարունակեալ զվէպս Պարսից, և Եկ-
րաանացուց աշխարհի, այսինքն փարսսաանայ և արարսաանայ. զոր ի մանու
Զեարին իշխանի Պարսից, սկսայ ուրոյն վիպել սր ըստ միոջէ շնորհիւ Տեառն՝
զհամայն անցս՝ զորս անցեալ փոթորկարար պատուկեցին ի կալուածս սահ-
մանաց Պարսից աշխարհի, մինչև ուր ուրեք կամեցեալ հաճեցի Տէք՝ յամբոկ
աբարեալ եզերեցից գկիր առնութիւնս իմ և զայլն»⁵: Նա նպատակ է ունեցել
գրելու նաև երկրորդ հատորը, բայց չի հասցրել:

Փաստորեն երկասիրության երկրորդ մասը Զերին խանի պատմությունն է, որը Ջուղայեցին գրել է որպես ժամանակակից և ականաան: Շարադրանքը ո-
րոշ չափով կրում է ժամանակագրական բնույթ: Երբ նյութն առաա է, Խաչատուր
Ջուղայեցին պատմությունն ավելի մանրամասն է շարադրում, իսկ երբևմն ընդա-
մենը սրայս թվարկում է թագավորներին ու նրանց աարեթվերը:

Առաջին հատորի նյութը Ջուղայեցին վերցրել է հայ պատմագիրներից ու
պարսից ադրյուրներից: Վերջիններիս կապակցությամբ նա գրում է. «Ուտի չո-
գայ առ զիաունս պարսից՝ ... բերին առաջի իմ զմեծ մաանան մի կարի թաարձի,

¹ Լ. Բ ա բ ա յ ա ն, Դրվագներ Հայասանի XIV-XVIII դարերի պատմագրության, Եր., 1984, էջ 185:

² Խաչատուր Աբեղայի Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 10:

⁴ Նույն տեղում, էջ 14-15:

⁵ Նույն տեղում, էջ ԻԳ:

որ իբր ըստ դիտման և ըստ կարծեաց մտաց նոցա՝ էր Սոփեր ճշմարտաճառ վիպագրութեան որոց նախնեաց, և ստոյգ գրուցաարութիւն յառաջնոց»:⁶

Շահ Արասի կապակցությամբ Ջուղայեցին գրում է. «Արդ՝ աեաւասիկ մինչև ցասա ծայրաքաղ արտաեանեալ եաւաքեցի ի պաամութեանց Շահ Արասայ՝ ուռոյգ դիտողութեամբ ի մերոց և ի պարսից մատենից: Բայց ոչ գրոյորն եամանգամայն գրեցի, այլ ի բիրոց և յանրաւից գործոց նորա, գոյժ եաւասաին և զկարևորն վասն իմոյ իսկ տենչալոյս րացայայեալ զեկուցի»:⁷

Իսկ շահ Թահմազի և Նադիրի մասին նյութը վերցրել է անգլիացի վտճառական միստր Հանուեից, որը Թահմազի ու Նադիրի ժամանակ եղել է Մպանեմում և զոել նրանց պատմությունը: Խաչատուր Ջուղայեցին օգտվել է այդ պատմության եայերեն թարգմանությունից⁸:

Խաչատուր Ջուղայեցին նշում է, որ ինքը «րագում անգամ է սաուգել», եեառ նոր գրել: Նա մեծ չափով օգտվել է Ժամանակագրություններից ու զավսգանագրերից: Ջուղայեցին մեծապես վստահում է հայկական աղբյուրներին և միաժամանակ անվստահություն է տածում պարսից աղբյուրներին եանդեպ: Նա նշում է, որ երբ իր մոտ կարդացել են պարսկական մաայանը, ապա «սքանչալ գարմացայ» պտրսիկների կտրության վրա, թե ինչպես է այդ խորամանկ ազգը եավսաում այդպիսի «շադֆադֆի և շամրուշ» գրույցների: Պատմիչը նաև նշում է, որ դրանք լեցուն են «խստաալստոյճ» առասպելներով ու «ստայօդ և ցոփարան րաջադանքներով»⁹:

Պարսկակում աղբյուրները եամեմատելով միմյանց եեա՝ պատմագիրը ճշմարացի կերպով նկատում է, որ նրանց եաղորդումները չեն եամապատասխանում իրար: Անգամ չեա երկու պաամիչ կամ ժամանակագիր, որոնց եաղորդումները նման լինեն միմյանց:

Ջուղայեցու աշխատությունը րադկացած է երկու մասից: Առաջին մասում, րացի պարսից թագավորների ժամանակագրություններից, տրված է նաև Նոր Ջուղայի առաջնորդների և նրանց կյանքի պատմությունը, Հովհաննես վարդապետի դավանարանական վիճարանությունը պարսից Սուլեյման շաեի որդի Հուսեյնի եեա և այլն: Հովհաննես Մրքուզն անգամ րանավիճել է պարսից իմասաասերների և աստվածարանների եեա: Հուսեյն շաեի երամանով Հովհաննես վարդապետը հայերեն և պարսկերեն լեզվով գրի է առել «յոդ րանավեները, որպեսզի եեաագա սերունդները օգավեն դրանցից»¹⁰: Պարսից շաեերի, իմասաասերների ու աստվածարանների եեա Հովհաննես Մրքուզի ունեցած րազմաթիվ ու աարարմոյթ լիեների արդյունքը եղավ այն, նշում է Խաչատուր Ջուղայեցին, որ «... կակդացոյց զկարծրացեալ սիրաս նոցա որ րնդ մեզ, և երարծ գըշնամութիւնն գայն՝ գոր յառաջն ունէին գոր և մինչև ցայսօր յոյժ քաղցրութեամբ վարին ընդ մեզ»¹¹:

Փաստորեն Հովհաննես Մրքուզը ոչ միայն եամարձակ ու եայրենասեր է եղել, այլև՝ շաա գգույշ ու խելացի, որպեսզի կարողանար րանավիճել պարսից քմանա շաեերի եեա, քանզի այդ թանավեներում գործում էր նաև խորամանկությունն ու խարդախությունը:

Սերված լինելով Շահ Արասի կողմից Ապահան գաղթեցված եայերից՝ մաաեմագիրը րագմաթիվ էջեր է նվիրում եայերի րոնագաղթին: Հեաաքըքրական են նաև Նոր Ջուղայում հալկական առաջին ապարանի եիմնադիր Խաչատուր վարդապետի լուսավորչական գործունեության մասին եաղորդվող տեղեկությունները: Նրա երկում արժանաեալատ տվյալներ կան նաև ռայգպան գաղթօջախում եայերի սոցիալ-անաեսական ծանր վիճակի, նրանց կրած ազգային ու կրոնական եալածանքների, ինչպես նաև պարսից արքունիքի կիրառած եաթ-

⁶ Խաչատուր արեղայի Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 21-22:

⁷ Նույն տեղում, էջ 136:

⁸ Լ. Բ ա ր ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 187:

⁹ Խ. Ջուղայեցույ Պաամութիւն Պարսից, ... էջ 22:

¹⁰ Հ. Միրզոյան, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Եր., 2001, էջ 27-28:

¹¹ Խ. Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, ... էջ 205:

կային ծանր քաղաքականության մասին: Նրա երկր նաև 17-րդ դարի առաջին կեսին Նոր Զուղայում ծավալված աղանդավորական շարժման հիմնական աղբյուրն է:

Նոր Զուղան եանդիսացել է նաև հայ ապագրության առաջին օջախներից մեկը: Խաչատուր Կեսարացու ջանքերով այնտեղ հիմնված ապարանը առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև ամբողջ Միջին Արևելքում¹²:

Հանրահայա է, թե Նոր Զուղան ինչպիսի տեղ է զբաղեցրել Սեֆյանների քաղաքականության մեջ թե՛ անտեսական, թե՛ քաղաքական, թե՛ մշակութային առումով: Իրականացնելով մեծ բռնագաղթը /1604թ/ Շահ Արասը պետության կենտրոնական մարզերում վերաբնակեցրեց 10 000 հայ ընտանիքների, որոնց մեջ բացի ջուղայեցիներից կային նաև երևանցիներ, ագուլեցիներ, դաշաբեցիներ, նախիջևանցիներ, թավրիզցիներ և այլն: Բայց շահը հաակապես յուրահատուկ մոտեցում ուներ ջուղայեցիների նկատմամբ: Դրա պատճառը ակնհայտ է, քանզի շահը ցանկանում էր հայ վտանգականներին ծառայեցնել իր երկրի ներքին ու արաքին առևտուրը զարգացնելու գործին: Միաժամանակ նա ձգտում էր բարձրացնել պետության կենտրոնական շրջանների, հաակապես նոր մայրաքաղաք Սպահանի անահական նշանակությունը և հարստացնել շահական զանձարանը: Այստեղից էր, շահի գլխավոր նպատակը հանգում էր նրան, որ հայ վաճառականների օգնությամբ իրականացվի Իրանի արաքին առևտրի ուղին թուրքական ցամաքային ճանապարհից դեպի հարավ՝ Պարսից ծոց տեղափոխելու վաղեմի ծրագիրը: Շահը հետապնդում էր նաև ռազմավարական նպատակներ, այն է՝ Իրանի և Թուրքիայի սոցա սահղծել «մեռյալ ապրածություն»՝ դժվարացնելու համար թուրքական բանակների առաջխաղացումը դեպի Անդրկովկաս ու Իրան: Սահմեղական ամբոխից հայ վաճառականների անձի ու գույքի ապահովության համար Շահ Արասը երապարակեց հաաուկ երովարակ, ըստ որի վաճառական հային սպանողը հնթարկվում էր մահապատժի¹³:

Պատմագիրը դառնությամբ է խոսում Շահ Արասի իրականացրած բռնագաղթի մասին, ցավով նշում «մեծ ուրգունի» կործանարար հեղաշրջումները: Խոսելով Նոր Զուղայում իրականացվող շինարարության մասին՝ նա գոհունակությամբ նշում է. «...ուր շինեցին ջուղայեցիք երաշալի յօրինուածովք, և բարձրաբերձ և գեղեցկագաղթ շինուածովք, և ոսկեհնար՝ և զանազան երփնափայլ երանգոց վայելչութեամբք զաուոն և զյարկս բնակութեան իւրեանց. ըստ որում և զորոց պայծառութեանց ի անողաց գերաեռչակ խկ է աթղեօք»¹⁴:

Եթե Շահ Արաս I-ից հետո նրա զանգ ժառանգած շահ Սեֆին (1629-1642թթ) և շահ Արաս II-ը (1642-1666թթ) իրանահայության նկատմամբ վարում էին հարաբերականորեն բարյացակամ քաղաքականություն, ապա շահ Մուլեյմանի (1666-1694թթ) և նրա հետագա շահ Սուլթան Հուսեյնի (1694-1722թթ) անհրապետության շրջանում Սեֆյանների քաղաքականությունը կարուկ փոխվեց: Կառավարությունը ծանր հարկեր է դնում հաակապես Նոր Զուղայի վրա, աարքեր պատրվակներով սկսում է շարաշահումներ կատարել հայերի նկատմամբ: Սուլթան Հուսեյնը անգամ երապարակեց մի օրհնք, ըստ որի հային սպանող մահմեղականը կարոո է ազաավել պատժից, որպես արյան գին վճարելով ոչ մեծ դրամական աուգանք¹⁵:

Նոր Զուղան ծանր օրեք ապրեց հաակապես աֆղանների արշավանքի ժամանակ, և ջուղայահայությունը սկսեց ելք որոնել սահղծված դրությունից դուրս գալու համար¹⁶: Զուղայեցին ցավով նշում է. «Բայց զկնի բազմաց ամաց ի

¹² Վ. Բ ա յ ռ ո ղ յ ա ն, *Իրանն այսօր*, 1999, էջ 278:

¹³ В. Б а ъ б у р т я н, *Армянская колония Новой Джульфы в XVII веке*, Ер., 1969, стр 19.

¹⁴ Խ. Զուղայեցույ Պատմաթիւն Պարսից, ... էջ 102:

¹⁵ Վ. Բ ա յ ռ ո ղ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 273-274:

¹⁶ Մ. Գ ա ս պ ա ռ յ ա ն, *Հայ-իրանական հարաբերությունները XVIII դարի 20-30 ականրվականներին, ԳՄԻ հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված քրիստոնեության 1700-ամյակին, Չեկուցումների հիմնադրույրներ*, Եր., 2001, էջ 14-15:

վերայ անցանելոց՝ բոլոր Ջուղայի ետրուսաք բնակիչքս զբիրակերայ նեղութիւնս ի յԱղուանից, և ի Նաղեր խթոխտ արքայէն, և ի յայոց ամենի չարագոյն իշխանաց և մարգալտնաց երկրիս կրեայք. փախեան ամենեքեան ի քաղաքէս... Իսկ յարդիս եագիս գաանի ի Նոր Ջուղայս՝ երեք հարիւր տունք բնակիչք ի եայոց տոգէս. իսկ շաաքն հ միջի մերում բնակելոցն՝ են ի յազգէն պարսից, որք օր ըստ օրէ գան ի քաղաքէն և սեպեականեն գկալուածս բնակութեան մերոյ և ի վերայ մեր իսկ բռնացեալ կոփահարեն»¹⁷:

Պատմագիրն առելությամբ է իասում Շահ Աբասի մասին, նրան համարում է «ամենախարդախ և անգաւոր օձն»¹⁸: Վերջինս արաաքուսա բարեկամ է ձևանում հայերին, սակայն ներքուստ դավեր է նյութում նրանց դէմ: Ջուղայեցին վնասակար է համարում այն օրենքը, ըստ որի մահմեդական դարձած հայերը միայնակ կարող էին աիրանալ հայրական ժառանգությանը:¹⁹

Ջուղայեցին խոսում է նաև Նոր Ջուղայի եկեղեցիների մասին, որոնք կառուցվում էին Շահ Աբասի երամանով. «Եւ մերք ընդ մերք ինքն Շահաբաս գայր՝ և կանգնէր յոնդիման ճարաարացն շինողաց, և երամայէր գեղեցիկ յօննուածովք շինել, և երփնեղանգ գունովք, և պճնագաթդ անսլեամբ գարդարել»²⁰: Դրանով շահը գրավում էր հայերի համակրանքը, որոնք մնում էին Պարսկաստանում և սիրաւտժար ծառայում պարսից արքունիքին:

Խաչատուր Ջուղայեցին Առաքել Դավրիժեցու ման քացահայաում է և քննադատում նաև Շահ Աբասի հեռագնա նպատակները:

Պատմագիրը գայրույթով է նշում, որ հայերը այդ ամենի նկատմամբ անգգա են և քարացած են իրենց մոլորության մեջ, չեն պայքարում, չեն ձգտում քոթափելու պարսից լուծը:²¹ Մի շարք ուսումնասիրողներ բարձր են դասել Ջուղայեցու այս մարաաներավերը և ամենայն իրավամբ դա համարել են սկզբունք հայ այն քաղաքական գործիչների համար, ովքեր այդ պայքարի առաջամարտիկները եղան:²²

«Պատմութիւն Պարսից»-ի երկրորդ մասում տրված են Նաղիր շահից եեառ Պարսկաստանում սանդժված անիշխանության ժամանակաշրջանի պատմութիւնը, գահակալական կռիվները, կենարոնախույս ուժերի ակաիվացումը, ինչպես նաև Քերիմ խանի գործունեությունը: Այս մասին Ջուղայեցին գրել է որպես ականաանս և նշում է. «Արդ ժամ է մեզ այսուեետեւ եւ գերկրորդ մասն վճարել, որ է ճեշտ պատմութիւն գործոց Քերիմ խանի մինչեւ ի մահ նորա բովանդակելով»²³:

Ջուղայեցու երկում զգալի աեղ է հաակացված նաև Նաղիր շահի գործունեությամբ: Յույց է տրված, քի ինչպես աննշան առեմից սերված ռամիկ ուղաապանը կարողացել է հասնել այդ փառքին. «Այլ ստոյգ է՝ զի սա ի ռամկաց և յաննշան առեմից վերարուսեալ շառաիղեցաւ, քանզի և հայր նորա էր քաղեացագործ՝ որով աշխաանալ ուաէր գեաց իւր, և անուն նորա Իմամ Դուլի»²⁴:

Հայանի է, որ Նաղիրը միայն նվաճող չէր: Նա ունեցել է մեծ գաղափարներ: Հասկանալով, քի ինչ չարիք է պաաճառում կրոնական խտրականությունը, նա ձգտում էր իրեն հպաաակված աշխարհում սանդժել մի միասնական կրոն, որը պարաագիր էր լինելու քի՝ քրիստոնյայի, քի՝ մահմեդականի և քի՝ երեայի համար: Շահը անգամ երամայել էր քարգմանել Ավեսարանը և երեական Թայմուղը, որպեսզի ուսումնասիրվեին բոլոր կրոնները, և եիմքեր մշակվեին նրանց

¹⁷ Խ. Ջուղայեցույ Պատմութիւն ..., էջ 102-103:

¹⁸ Նույն աեղում, էջ 127:

¹⁹ Նույն տեղում, էջ 112:

²⁰ Նույն տեղում, էջ 114:

²¹ Նույն տեղում, էջ 113:

²² Հ. Առաքելյան, Հայ ժողովրդի մաավոր մշակույթի գարգացման պատմություն, հ.2, եր., 1964, էջ 595-596:

²³ Խ. Ջուղայեցույ Պատմութիւն ..., էջ ԺԱ-ԺԲ:

²⁴ Նույն տեղում, էջ 255:

միացման համար²⁵։ Նույնիսկ Նադիրը սր քանի հայ եռզուրակամների պատվիրել էր հայերենից պարսկերեն քարգմանել 4 սուրբ գրքերը և արաբերենից պարսկերեն՝ Դուրանը։

Այդ աշխատանքի համար շահը հարյուր թուրման պարզե էր տվել քարգմանիչներին։ Պատմագիրը այս մասին գրում է. «Եւ քեպետ դոյզն ինչ էր գոր մա պարզեհաց մոցա, որ և չե ևս էր բաւական ծախուց ճանապարհին. սակայն աստանօր գարմանք իմն մեծ երևի. քանզի ի տաաասկէ թուզ քաղեն, և ի մորենուդ խաղող»²⁶։

Հայրենասեր պատմագիրը քննադատում է Նադիրին և խարագանում նրա գործունեությունը։ Նա Նադիրի բռնակալությունն ավելի դաժան է համարում, քան աֆղաններինը²⁷։ Բայց միաժամանակ բարձր է դասում Նադիրի ռազմական ունակություններն ու քաջությունը. «Արդ՝ երանի՜ թէ Նատըր արքայն, - դառնացած գրում է Ջուղայեցին, - ըստ հաւասար քաջութեան իւրոյ՝ բարոյական առաքինութեամբ պերճացեալ իցէր և բարգաւաճեալ... Բայց մա այնքան չափազանցաբար ի յամողորմութիւնս և յամբարաւանութիւնս հակեալ ձգահցաւ, մինչ զի ասենք թէ՛ մա երբեմն զգայլս անբանս՝ սասակապէս տուժեաց տուգանօք»²⁸։

Պատմագիրը կանգ է առնում նաև Նադիրի կատարած բարբարոսությունների վրա, մեծ ցավով խոսում անմեղ բնակչության կոտորածների մասին. «Որպէս և յազգէս մերոյ ևս խկ ընդ կենդանւոյն այրել երամայեաց»²⁹։

Հայտնի է, որ Նադիրի անգործությունները երեշափոր բնույթ են կրել հասկապես Նոր Ջուղայում։ Հայ վաճառականներն անընդհատ ենթարկվում էին չարաշահումների ու կեղեքումների։ Հիմնական պատճառն այն էր, որ հայկական գաղթօջախը գտնվում էր Սպահանի մոտ, իսկ Նադիրը, իր կյանքի վերջին տարիներին լինելով խիստ կասկածամիտ, Սպահանը համարում էր դավադրությունների բույն և պատրաստվում էր սրի քաշել նրա ամբողջ բնակչությանը³⁰։

Բարբարաւարար, Նադիրի մահը խանգարեց այդ երեշափոր ծրագրի իրականացմանը։ Խաչատուր Ջուղայեցին ժողովուրդներին ու երկրներին հասած բոլոր դժբախտությունները համարում է աստծու պատիժ՝ Նադիրի սպանության մասին գրելով. «Ահա՛ այսպէս անկեալ սատակեցաւ պատուհասն երկնային Նատըր՝ ի վատտուն և մի ամի կենաց իւրոց, և ի մեռասան ամի քազաւորութեան իւրոյ, և վասն խստագոյն չարութեանց իւրոց՝ ո՛չ կարաց ժամանել ի բարի վաղճանի»³¹։

Միաժամանակ Խաչատուր Ջուղայեցին դրվատանքով է խոսել Ջերիմ խանի գործունեության մասին, որը կարողացել է վերջ տալ զահակալական կռիվներին և Պարսկաստանում ստեղծել համեմատաբար խաղաղ ու կայուն վիճակ³²։

Պատմագիրը նշաւաակ է եեաապնդել շարադրել Պարսկաստանի պաամությունը սկզբից մինչև իր ապրած օրերը։ Պարսկաստանի պաամության եետ կապելով հայ ժողովրդի պաամությունը՝ Ջուղայեցին բավականչափ ամբողջացում է հայության այդ հաավածի պաամությունը։

Խաչատուր Ջուղայեցու աշխատությանը հաաուկ են միջնադարյան պաամագրության շաա ներկայացուցիչների երկերում նկատվող քերությունները, շարադրանքի թելը ռազմիցս կարվում է երկարաշունչ դաաողություններով, մեծ աեղ է եաակացվում դավանաբանական հարցերին, եեղինակի գնահաաականները հաաախ աաաապում են կողմնակալությամբ։

²⁵ С. К я ш м и ш е в, *Локоды Надир-шаха в Афганистан, Кабул и Индию, Тифлис, 1869, стр. 216.*

²⁶ Խ. Ջուղայեցույ Պաամութիւն ...ի, էջ 264։

²⁷ Նույն տեղում, էջ 272։

²⁸ Նույն տեղում, էջ 272-273։

²⁹ Նույն տեղում, էջ 268-269։

³⁰ Լ ե ո, *Երկերի ժողովածու, 3, Գիրք Բ, Եր., 1973, էջ 228։*

³¹ Խ. Ջուղայեցույ Պաամութիւն ..., էջ 270-271։

³² Նույն տեղում, էջ 325-326։

Չնայած այս ամենին՝ Ջուղայեցու աշխատության երկրորդ մասը, գրված լինելով իրադարձությունների ժամանակակցի ու ականատեսի կողմից, չափազանց արժեքավոր պատմական աղբյուր է։ Այն սառուգապատում աղբյուր է Պարսկաստանի ու Անդրկովկասի եռտկապես 18-րդ դարի 30-70-ական թվականների ժամանակաեռավաժի ռազմաքաղաքական պատմության ուսումնասիրման համար։

ТРУД ХАЧАТУРА ДЖУГАЕЦИ КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ ПЕРСИИ

____ Резюме ____

____ А. Гаспарян ____

На страницах "Истории Персии" армянского историка XVIII века Хачатура Джугаеци собраны и изложены все сведения об Иране, содержащиеся в армянских историографических памятниках предшествующего времени. Критически относясь к материалам, автор обосновывает большую достоверность армянских, нежели персидских источников. Важнейшие события, происходившие в Персии, Х. Джугаеци рассматривает в сопоставлении с историей армянского народа. Особый интерес представляют его непредвзятые сведения о политике персидских шахов (Шах Абас I, Надир шах).

В целом, книга Х. Джугаеци является достоверным источником как по персидской истории, так и по военно-политической истории 30-70-х гг. XVIII века.